ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գերագույն հոգևոր խորհուրդս այսու հաղորդում է ի գիտություն Հայաստանյայց եկեղեցվո նվիրապետական Աթոռներին, սրբազան եպիսկոպոսներին, եկեղեցվո հոգևոր սպասավորներին և հայ հավատացյալ ժողովրդին, թե հանգամանորեն քննելով կարգաթող Խոսրով եպիսկոպոս Էմիրզեյանի պարագան և,

1. Ի նկատի ունենալով Թուրքիո հայոց պատրիարք ամենապատիվ տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյանի և Կ. Պոլսո կրոնական ժողովի 1968 թվականի փետրվար 19-ի որոշումները.

2. Ի նկատի ունենալով Խոսրով նախկին եպիսկոպոս Էմիրզեյանի կարգաթողության գրավոր հայտարարությունը ուղղված Կ. Պոլսո ամենապատիվ պատրիարք սրբազանին սույն թվականի փետրվար 9-ին.

3. Ի նկատի ունենալով ընդհանուր վրդովմունքի այն մթնոլորտը, որն առաջ է բերել կարգաթող Խոսրով եպիսկոպոսի գայթակղեցուցիչ արարքը ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ սփյուռքի բոլոր հայկական գաղութներում.

4. Այլև քննության առնելով կարգաթող Խոսրով եպիսկոպոսի 1968 թվականի ապրիլ 3-ի և հուլիս 30-ի մեղայագրերը և բանավոր բացատրությունները, տրված Մայր Աթոռում Գերագույն հոգևոր խորհրդի հատուկ հանձնաժողովին, սույն թվականի օգոստոսի 1-ին.

Գերագույն հոգևոր խորհուրդս եկավ այն եզրակացության, թե հիշյալ կարգաթող եպիսկոպոսի նկատմամբ պետք է գործադրվեն Հայաստանյայց եկեղեցվո կանոնները, հատկապես Շահապիվանի ժողովի Ա կանոնը, որ ասված է.

«Եթէ եպիսկոպոս ոք գտցի ի պղծութեան կամ ի պոռնկութեան, և զԱռաքելական զպատիւն և զսուրբ աթոռն անարգեաց, և վկայութեամբ ի յայտ եկեսցէ, յաթոռոյն և յիշխանութենէն մերժեսցի և զքահանայութիւնն մի պաշտեսցէ...»;

Որով Գերագույն հոգևոր խորհուրդս անհրաժեշտ է գտնում հաստատել Կ. Պոլսո ամենապատիվ արքազան պատրիարքի և կրոնական ժողովի որոշումները ու խնդրել Վեհափառ Հայրապետին կարգալույծ անել Խոսրով եպիսկոպոս Էմիրզեյանին և դասել նրան աշխարհականների շարքը իր նախկին անունով՝ Անդրանիկ Էմիրզեյան (Էմիրզե-Օղլու)։

Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսը, ընթացք տալով Գերագույն հոգևոր խորհուրդի վերոհիշյալ խնդրանքին և որոշման, օգոստոս 5-ի հայրապետական Իր վճիռով կարգալույծ արեց եպիսկոպոս Էմիրզեյանին՝ դասելով նրան ի շարս աշխարհականաց։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

10 օգոստոս 1968
Ս. Էջմիածին